



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԹԻՎ 3 ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
06.04.2023թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 26 անդամները, բացակայում է Լիլիթ Հարոյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Ա.Ջաքարյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը և Ալափարս գյուղի վարչական ղեկավար Վ.Անդրիասյանը:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալոյանը:

Նախքան նիստի սկսվելը աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը հայտարարեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Ա.Գալստյանը գրությամբ դիմել է առաջարկած նախագիծը՝ այն է. «Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 77-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրակարգային նախագծերից հանելու վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ են ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 78-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը աճուրդային կարգով օտարելու մասին:

6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 22-րդ փողոց թիվ 26 հողատարածքը և շինությունները վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
7. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 4-րդ հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 26

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:

/Ձեկ. Գ. Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, **առաջարկում եմ.**

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/: